

«ԱԼՄԱՍ» ԲԲԸ
2009Թ. ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
(ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿ)

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՁԵԿՈՒՅՑ

- 1) Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում տեղի ունեցած կարևոր դեպքերի նկարագիրը և դրանց ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա՝ ներառյալ այն հիմնական ռիսկերի կամ անորոշությունների նկարագիրը, որի հետ առնչվելու է ընկերությունը հաջորդ հաշվետու ժամանակաշրջանում: Կարևոր դեպքերը բոլոր այն դեպքերն են, որոնք էական ազդեցություն են ունեցել ընկերության ֆինանսական վիճակի վրա, ինչպես նաև այլ դեպքերը, որոնք ընկերության կարծիքով կարևոր են և (կամ) ողջամիտ ներդրողը կկարևորեր ներդրումային որոշումներ կայացնելիս:

Ընկերության գործունեության հիմնական տեսակը ավաստային գործիքների արտադրությունն է: Դրանցից են քար կտրող, հղկող, ապակի կտրող գործիքները: Մանրածախ գներով հաշվարկի դեպքում 2009 թ. 3-րդ եռամսյակի ընթացքում արտադրվել է 15,720,000 դրամի արտադրանք: Արտադրության հումքը (մետաղ, օլոֆ, պղինձ և այլն) Ընկերությունը ձեռք է բերում Ռուսաստանի Դաշնությունից և Չինաստանից: Հաշվետու եռամսյակում Ռուսաստանի Դաշնությունից ձեռք է բերվել 3,115,000 դրամի տարբեր նյութեր (պղնձի փոշի և ավաստային փոշի), իսկ Չինաստանից ձեռք է բերվել 809,000 դրամի ավաստային փոշի: Արտադրանքի վաճառքի գները 2009 թ. 3-րդ եռամսյակի ընթացքում կայուն են եղել: 2009 թ.-ի 3-րդ եռամսյակի ընթացքում իրացվել է 30,573,000 դրամի արտադրանք, որից 7,140,000 դրամի արտադրանք արտահանվել է Իրանի Իսլամական Հանրապետություն: Արտադրանքի իրացումը հիմնականում լինում է տեղական շուկայում: Ընկերությունում առկա արտադրանքի մնացորդը 01.01.2009 թ. և 01.10.2009 թ. դրությամբ բերված է աղյուսակում.

Աղյուսակ 1

«Ավաստ» ԲԲԸ-ում առկա արտադրանքի մնացորդը (դրամ)

	Պահեստում	Խանութում
01.01.2009 թ.	367,763,000	11,215,000
01.10.2009 թ.	378,978,000	-

Աղյուսակ 2

ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ 2009 թ. III ԵՌԱՄՍՅԱԿ

Ցուցանիշ	Հազ. դրամ
Արտադրանքի իրացումից հասույթ	30573
Իրացված արտադրանքի ինքնարժեք	-27035
Իրացման ծախսեր	-1519
Վարչական ծախսեր	-14529
Գործառնական գործունեությունից շահույթ	-12105
Այլ ոչ գործառնական գործունեությունից շահույթ	-17342
2009թ. III եռ. գուտ շահույթ	-29447
Հիմնական միջոցները 01.10.2009թ.	943229
Կանոնադրական կապիտալը	418217
Դեբիտորական պարտք	19441
Կրեդիտորական պարտք	1120843

ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ 2009թ. III եռ.

Ցուցանիշի անվանումը	01.10.2009 թ.
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	-209.4
Մեփական կապիտալի շահութաբերություն (ROE)	-14.6 %
Ակտիվների շահութաբերություն (ROA)	-5.2 %
Զուտ շահույթի մարժա (NPM)	-116.3 %
Կապիտալի համարժեքության գործակից	33.2 %
Ֆինանսական կախվածության գործակից	200.8 %
Բացարձակ իրացվելության գործակից	0.0
Ընթացիկ իրացվելության գործակից	0.8
Ընդհանուր իրացվելության գործակից	23.4
Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	4.7
Դեբիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	78.2
Պաշարների շրջանառելիության գործակից	0.1
Պաշարների շրջապտույտի տևողությունն օրերով	3810.7
Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	0.1
Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	6207.6

Ընկերության գործունեության հետ կապված հիմնական ռիսկը կամ, ավելի ճիշտ կլինի ասել, անորոշությունը, պայմանավորված է ԱՄՆ դոլարի կուրսի հետ: Արտարժույթի փոխարժեքային տարբերությունները կարող են էական ազդեցություն ունենալ ընկերության ֆինանսական վիճակի վրա:

2) Ընկերության հետագա հնարավոր զարգացման նկարագիրը հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար:

Ներկայիս համաշխարհային ֆինանսական ճգնաժամի պայմաններում զարգացման նոր ծրագրերի և հեռանկարների վերաբերյալ կանխատեսումներ հնարավոր չէ անել:

Ձեկույցը կազմելու պահի դրությամբ Ռուսաստանի Դաշնությունից և Իրանի Իսլամական Հանրապետությունից պատվերներ չկան: Բացի այդ, 4-րդ եռամսյակում նախատեսվում է ընկերության արտադրանքի իրացման ծավալների անկում, ինչը պայմանավորված է ցրտի հետ: Յուրտ եղանակին շինարարության ծավալները ընկնում են, դրան համապատասխան ընկնում է նաև ընկերության արտադրանքի նկատմամբ պահանջարկը: